ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» հունիսի 2019թվական N 66-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Զեփյուռ Սրապիոնի Նենեջյանի լիազոր անձ Էդուարդ Մուշեղի Բաղդասարյանի (ծնված՝ 1976 թվականի հուլիսի 15-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Զեփյուռ Սրապիոնի Նենեջյանին պատկանող Մայակովսկի համայնքի 8-րդ փողոցի թիվ 41 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 2306980 վկայական, տրված 2007 թվականի մարտի 21–ին, «ՍՎ ՉԱՓԱԳՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի մայիսի 30-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ՍՎ ՉԱՓԱԳՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Զեփյուռ Սրապիոնի Նենեջյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 8-րդ փողոց թիվ 41 հասցեի տնամերձ հողակտորում 2009 թվականին ինքնակամ կառուցել է ծածկարան՝ Տարտ=59.8 քառ.մետր, անասնաշենք՝ Տարտ=38.1 քառ.մետր և պարիսպ՝ S= 2.8 քառ.մետր , ինչպես նաև ինքնակամ բացել է մեկ պատուհան և մեկ հատ դուռ ձևափոխել պատուհանի:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Զեփյուռ Սրապիոնի Նենեջյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 8-րդ փողոց թիվ 41 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների, ինքնակամ բացված մեկ պատուհանի և մեկ հատ դուռը՝ ձևափոխված պատուհանի , պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Զեփյուռ Սրապիոնի Նենեջյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքի 8-րդ փողոց թիվ 41 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված ծածկարանը՝ Տարտ=59.8 քառ.մետր, անասնաշենքը՝ Տարտ=38.1 քառ.մետր և պարիսպը՝ S=2.8 քառ.մետր, ինչպես նաև ինքնակամ բացված մեկ պատուհանը և մեկ հատ դուռը ձևափոխված պատուհանի ճանաչել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Մայակովսկի համայնքի բյուջեի N 900105222229 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 177 120 (մեկ հարյուր յոթանասունյոթ հազար հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը և երկու հատ բացված ինքնակամ պատուհանների համար 2000 (երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.հունիսի 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հունիսի 2019 թվական N 67-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2018թվականի հունվարի 10-ի թիվ 04-Ա որոշումը , Մայակովսկի համայնքի բնակիչ Լուսաբեր Շահինյանի դիմումը ֆինանսական օգնության մասին, հաշվի առնելով նրա ընտանիքի սոցիալական վիճակը և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը,

որոշում եմ՝

1. Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից Լուսաբեր Շահինյանին տրամադրել 45 000/ քառասունհինգ հազար/դրամ դրամական օգնություն.
2. Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2019թ.հունիսի 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հունիսի 2019 թվական N 68-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջները՝ *որոշում եմ.*

1.Մայակովսկի համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 12-ի N 33-Ն որոշումը պաշտոնական հրապարակել 2019 թվականի հունիսի 13-ին :

2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու միջոցով:
3. Նորմատիվ իրավական ակտը հրապարակելու պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2019թ.հունիսի 11